պահ պարոններ, սրանք միմյանց հետ պատերազմ սկսեցին իրենց իշխանության համար և գնացին Կարին ավագ իշխանավորի մոտ, որ մեծ փաշան է, որպեսզի դատի իրենց: Կարսը մնաց առանց իշխանավորի: Խանը այս լսելով՝ հավաքեց զորքը, տվեց քալանթար Մասումին և ուղարկեց Կարսի գավառը ու պատվիրեց նրան, որ թե քրիստոնյա գերես, խաղաղությամբ կբերես, իսկ եթե մահմեդական գերես, տղամարդկանց կկոտորես, կանանց կգերես և շենները կայրես ու կավերես: Այս պատվերը տվեց նրան, իսկ ինքը զորքն առավ գնաց Կաղզվանի[95] կողմերը և բոլոր վայրերը գերեց ու ավերեց: Հասավ մինչև հին քաղաք Բագրևանդ[96], որ այժմ կոչվում է Զառաֆխանա Երասխ գետի ափին: Գերեց բնակիչներին, քանդեց շենները, որոնք ավեր մնացին մինչև այսօր: Գերիներին ուղարկեց Վաղարշապատ[97]: Գնաց հասավ մինչև Կարնո գավառը և գերեց, ինչ որ գտավ: Շուռ եկավ Բասենի[98] և Պարտիզաձորի[99] վրա և եկավ Կարսի դուռը, և այն, ինչ մնացել էր Մասումի գերեվարներից, այն էլ խանը գերեց: Քանզի օսմանցիք չկարողացան դիմադրել, որովհետև ավազակները, որ ջալալիներն են, բազմացան հայոց փոքր Կողոնիայում՝ այսինքն՝ Շապղարասար (Շապինգարահիսար): Եվ օսմանցիների Մուրադ թագավորի հրամանով նրանց դեմ գնաց Կարնո փաշան, իսկ երկիրը մնաց անտեր, ուստի պարսիկները զորացան և այս ամենը արեցին:

ԳԼՈՒԽ ԽԲ
ՄԱՀՄԵԴԻ ՇԵՅԽԻՍԼԱՄԻ ՊԱՏԻԺԸ

Քանաքեռցի Միքայել անունով մի եպիսկոպոս կար: Սա այն Միքայել աբեղան է, որին Մեխլուի պատմության մեջ հիշատակել եմ: Մի մարդ էր երկայնահասակ, պակասախելք, գրքերի մեջ տգետ, իսկ աշխարհիկ խոսքի մեջ ճարտար: Սա ունեցավ մի պարսիկ թշնամի: Սա ասում էր՝ ես քո ազգականն եմ, ինչ որ դու ունես, ամենն էլ ինձ է հասնում, քանզի ես մահմեդական եմ և մեր օրենքները այսպես են տնօրինում: Եվ շատ անգամ հայհոյում էր եպիսկոպոսին՝ ասելով անաստված, հայհոյիչ, անհավատ, պիղծ: Այսպես երկուսի միջև կռիվ ու գզվռտոց էր: Երկուսն էլ գնացին դատավորի մոտ դատաստանի: Պարսիկը կարծում էր, թե ինքն է ճշմարիտ և պարծենում էր իր մահմեդականությամբ: Գնացին կանգնեցին շեյխի առջև: Պարսիկն ասաց՝ Միրզա, ես այս քրիստոնյայի ազգից եմ և մահմեդական եմ և ըստ օրենքի ապարանք եմ պահանջում սրանից, իսկ սա չի տալիս: Շեյխը հարցնում է եպիսկոպոսին, թե իրո՞ք սա քո ազգից է: Եպիսկոպոսը պատասխանում է՝ ես դրան ոչ գիտեմ, ոչ էլ ճանաչում եմ: Եթե դա իմ ազգից է, թող վկաներ բերի և ապացուցի ձեր առջև իր ազգակցությունը և իրենց լինի իմ ողջ գույքը: Շեյխը հարցնում է պարսիկին՝ վկաներ ունե՞ս, որ դրա ազգակիցն ես: Մահմեդականն ասում է՝ իմ վկան իմ հավատն է: Շեյխը ասում է՝շատ են այդ հավատ ունեցողները, բայց դա չի օգնի: Եթե վկաներ ունես, կբերես, իսկ եթե չունես, մի չարչարիր որևէ մեկին, քանզի առանց վկայի ոչինչ չես շահի: Պարսիկը ելավ գնաց Քանաքեռ, որպեսզի Քանաքեռի մահմեդականներից վկաներ բերի: Բայց նրանք չեկան, այլ անարգեցին նրան: Իսկ դատավորը թուղթ գրեց, տվեց եպիսկոպոսին շատ մահմեդականների վկայությամբ և կնիքով, մահմեդականին սուտ դուրս բերին:

Եպիսկոպոսը առավ դատավճիռը և գնաց: Մի ամիս հետո պարսիկը դարձյալ եկավ շեյխի մոտ և ասաց՝ մի անվարտիք սևագլխի համար ինչո՞ւ ամոթով թողիր և սուտ հանիր ինձ: Արդ՝ ես քեզ այսքան փող եմ տալիս, և դու իմ խոսքը ճշմարտիր: Իսկ դատավորը լսեց նրան, որովհետև կաշառքը կուրացնում է դատավորների աչքերը: Դատավորը կաշառքը առնելով՝ նրան թուղթ տվեց և նրան դարձրեց եպիսկոպոսի ազգական: Մահմեդականը թուղթը առավ, գնաց նստեց եպիսկոպոսի այգին: Իսկ եպիսկոպոսը գնաց շեյխի մոտ և ասաց՝ այս ի՞նչ բան է, բազմաթիվ մարդկանց վկայությամբ այս դատավճիռը ինձ տվիր, իսկ այժմ նրան իրավունք ես տվել, և ահա եկել նստել է իմ այգում: Շեյխը ասում է՝ ես ճիշտ վերահասու չէի իրողությանը, իսկ այժմ հավաստի իմացա, որ նա քո ազգականն է, և ըստ մեր օրենքի քո ամեն ինչը նրան է պատկանում: Եպիսկոպոսն ասում է՝ երբ քեզ կաշառք չէր տվել, ինձ ազգական չարիր, այժմ կաշառք առար և ինձ ազգական դարձրիր: Դատավորը բարկացավ, ծառաներին հրամայեց՝ նրան դուրս հանել: Եվ ծառաները հրելով նրան՝ պալատից հանեցին: